

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

« ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

2013 թվականի ապրիլի 22-ին և 23-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը:

Ժողովը մեկնարկեց ապրիլի 22-ին ակադեմիայի գիտական բաժանմունքներում, ուր ժողովականների ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցան շահագրգիռ քննարկումներ, արվեցին օգտակար առաջարկություններ, լսվեցին նաև հետաքրքիր և բովանդակալից գիտական զեկուցումներ:

Ապրիլի 23-ին ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ տարեկան ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Արարայան թեմի առաջնորդ, Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, նախարարներ, Ազգային ժողովի պատգամավորներ, բուհերի ղեկավարներ, այլ գերատեսչությունների ղեկավարներ, ԳԱԱ արտասահմանյան անդամներ:

Բացելով ժողովը՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել հաշվետու ժամանակաշրջանում կյանքից հեռացած ԳԱԱ ակադեմիկոսների և ԳԱԱ թղթակից անդամների հիշատակը:

Այա ժողովի մասնակիցների անունից նա շնորհավորեց Սերժ Սարգսյանին՝ ՀՀ նախագահ վերընտրվելու կապակցությամբ:

Արքեպիսկոպոս Կճոյանը Տերունական աղոթքով ողջունեց ժողովի մասնակիցներին և նրանց փոխանցեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի ջերմ ողջույնները, հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները:

Այնուհետև ՀՀ ԳԱԱ 2012 թվականի գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:



ՀՀ ԳԱԱ 2012 թվականի գիտական գործունեության մասին զեկուցեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը:

Զեկուցումներից հետո ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Գևորգ Վարդանյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության

ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Վահրամ Հակոբյանը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ռուբեն Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտավոր գիտաշխատող, պատմագիտության դոկտոր ենմա Կոստանյանը:

« ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ հաշվետու զեկուցումը

ՀՀ ԳԱԱ հարգելի անդամներ, մեծարգո հյուրեր 2012 թվականին համակարգի բոլոր գիտական կառույցներում շարունակվել են հիմնարար և կիրառական բնույթի գիտական մշակումները՝ բազային ֆինանսավորմամբ, նպատակային, թեմատիկ ու միջազգային ծրագրերով և պայմանագրերով:

2011 թվականին ընդունված ՀՀ ԳԱԱ-ի մասին օրենքը, ԳԱԱ-ի նոր կանոնադրությունը հնարավորություն տվեցին ինստիտուտների գիտաշխատողներին մասնակցելու ակադեմիայի վարչական մասի կազմավորման գործընթացին, զբաղվելու ձեռնարկատիրական լայնածավալ գործունեությամբ, առևտրայնացնելու գիտական արդյունքների կիրառական մասը:

Հաշվետու տարում տեղի են ունեցել համակարգի մի շարք ինստիտուտների տնօրենների ընտրություններ: Ընդհանուր առմամբ ինստիտուտների տնօրեններ են դարձել հմուտ, բանիմաց, հանրահայտ գիտնականներ: Սակայն պետք է արձանագրել՝ տնօրենների պաշտոնում բարձր որակավորում և կազմակերպական ձիրք ունեցող գիտնական նվիրյալների ընտրությունը հեշտ չի ընթացել: Պատճառը, թերևս, վերջին 1-2 տասնամյակում միջին սերնդի գիտնականների թվաքանակի շեշտակի նվազումն է:

2012 թվականին երկրորդ անգամ անց է կացվել Վ. Համբարձումյանի անվան միջազգային մրցանակաբաշխությունը: Մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ Յան Եյնաստոն (Էստոնիա) և Իգոր Նովիկովը (Ռուսաստանի Դաշնություն): Դափնակիրները պարտավորվել են գիտական լայնածավալ գործունեությամբ աջակցել Հայաստանում աստղաֆիզիկայի զարգացմանը:

2012 թ. գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հիմնարար հետազոտությունների գիտական բարձր մակարդակը: Այդ են վկայում արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում հրատարակված աշխատանքները՝ 762 գիտական հոդված և 18 մենագրություն, ինչպես նաև 81 միջազգային ծրագրերով կատարված աշխատանքները:

Մաթեմատիկայի ինստիտուտում դիտարկվել է հատվածի վրա ողորկ ֆունկցիայի վերականգնման խնդիրը, երբ հայտնի են Ֆուրիեի դիսկրետ գործակիցները:

Մեխանիկայի ինստիտուտում հետազոտվել է իդեալական հաղորդիչ սալի տատանումների խնդիրը երկայնական մագնիսական դաշտում:

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում դիտարկվել են կապի բարդ համակարգերում ինֆորմացիայի հաղորդման հուսալիության և անվտանգության ապահովման խնդիրները:

Բյուրականի աստղադիտարանում առաջին անգամ աստղային շիթերի հանգույցներում չափվել են սպեկտրալ բնութագրիչներով տարանջատված կառուցվածքների սեփական շարժումները:

Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում հետազոտվել է ջերմային նեյտրոնների դիֆուզիոն կվարցի միաբյուրեղներում՝ ակուստիկական գերցանցի առկայության պայմաններում:

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում առաջարկվել է ռադիոհաճախային ճառագայթման օպտիկական հետազոտման մեթոդ՝ հիմնված էլեկտրամագնիսականորեն հարուցված թափանցելիության երևույթի վրա:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում հետազոտվել է հզոր լազերային իմպուլսի՝ փնջային անկայունությունների վրա ունեցած ազդեցությունը: Սինթեզվել են հատուկ տիպի ապակե-բյուրեղային նյութեր՝ Հայաստանում լայն տարածում ունեցող հրաբխային ապարի պերլիտի վրա: Նախատեսվում է այդ կառուցվածքները կիրառել արեգակնային մարտկոցներում:

Սևանա լճի ավազանում ֆիզիկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի իրականացրած հետազոտությունները բացահայտել են, որ գետերի հունների փոփոխության, չկարգավորվող ջրառռի և փոքր հեկետրի կառուցման արդյունքում խախտվել է էնդեմիկ ձկնատեսակների բնական վերարտադրության ընթացքը:

Կենսատեխնոլոգիայի կենտրոնում կենսադիզելային վառելիքի ստացման նպատակով ուսումնասիրվել են մի շարք միկրոօրգանիզմների կողմից լիպիդների սինթեզը և ճարպաթթվային կազմը:

Մանրէների ավանդադրման կենտրոնի և միկրոբիոլոգիայի ինստիտուտի մանրէների կուլտուրաների հավաքածուի բազայի վրա կազմակերպվել է Ազգային հավաքածու՝ գիտաարտադրական մշակման մանրէների գենոֆոնդ:

Կենսաբանական, կենսաքիմիական և ֆիզիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ մեղրախոտը, որպես հանրապետությունում նոր, թանկարժեք տեխնիկական մշակաբույս, կարող է մշակվել և՛ ՀՀ-ում, և՛ ԼՂՀ-ում, նրանից ստացվող բուսահումքն ունի բուժիչ և կանխարգելիչ ազդեցություն:

Օրգանական քիմիայի բնագավառում հայտնաբերվել է նոր ներմուկելուլային վերախմբավորում:

Երկրաբանական գիտությունների ինստիտուտում ավարտվել են Չանգեզուրի հանքային շրջանի Cu-Mo հանքավայրերի մոլիբդենիտների Re-Os իզոտոպային հասակային որոշումները, որոնց հիման վրա մշակվել է հանքայնացման առաջացման նոր՝ եռափուլ մոդելը:

Հայագիտության բնագավառում շարունակվել են Հայաստանի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության, հայոց պատմության ուսումնասիրության արդյուրագիտական հենքը ձևավորելու և հարստացնելու նպատակով կատարվող ուսումնասիրությունները:

Առաջիկա տարիներին հայագիտության զարգացման հիմնադրույթներն արտացոլված են ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայագիտության զարգացման» հայեցակարգում: Ըստ այդ հայեցակարգի՝ ձևավորվել է հայագիտական միջազգային խորհուրդ, որը ներառում է Հայաստանի և Սփյուռքի առաջատար հայագետներին: ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ հիմնվել է պետական աջակցությամբ գործող «Համահայկական հիմնադրամ»: Կյանքի է կոչվել նաև հայագիտական նոր՝ «Բանբեր» >2

« ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

➤1 պարբերականը, որը կիրառարակվի մի քանի լեզուներով: Մեծամասշտաբ և ս մեկ հայագիտական միջոցառում է նախատեսվում. 2013թ. հոկտեմբերի 2-րդ կեսին հրավիրվելու է համահայկական 2-րդ հայագիտական միջազգային համաժողովը:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում սինթեզվել են մետաղածխածնային (M/C) նանոկոմպոզիտներ՝ Ni/C, Cu/C: Ստացված նյութերը փորձարկվել են որպես ֆիլտրեր տարբեր ոլորտներում:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում մշակվել և պատրաստվել է տագնապի ազդանշանի փոքրաչափ ռադիոհաղորդիչ տարբեր նպատակների համար:

Էկոլոգանոսֆերային կենտրոնում որոշվել են Արարատյան հարթավայրում ածեցվող ձկնաբուծական տնտեսությունների ջրի որակի և անվտանգության ցուցանիշները, էկոլոգիական աղտոտիչներով աղտոտվածությունը:

Կենսաքիմիայի ինստիտուտում շարունակվել են գալարմինի՝ որպես դեղամիջոցի կիրառման կլինիկական փորձարկումները: Աշխատանքներ են տարվում գալարմինի սրվակավորման ուղղությամբ:

«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում իրականացվել են ոչ սպիտակուցային ամինաթթուների պրեպարատիվ արտադրության տեխնոլոգիական պարամետրերի օպտիմալացում, արտադրական մոնիթինգի ստացում և փոքրածավալ արտադրության կազմակերպում:

Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում անջատվել և ուսումնասիրվել է Հայաստանում տարածված անթառամ կարմրավունի ծաղկազամբյուղների ֆլավանոլիդային խառնուրդը և ցույց է տրվել, որ նրա բաղադրությունը համընկնում է «Ֆլավին» դեղամիջոցի բաղադրությանը:

Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում կատարելագործվել է ալյումինային հանքանյութի մշակման եղանակը, որը թույլ է տալիս պրոցեսն իրականացնել ավելի ցածր ջերմաստիճանում, ինչի արդյունքում հնարավոր է խալկոպիրիտ և մոլիբդենիտ հանքանյութերը մշակել տնտեսապես շահավետ և էկոլոգիապես մաքուր եղանակով:

Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում նախագծվել, պատրաստվել և Մարմարիկի ջրամբարի պատվարի վրա տեղադրվել է սեյսմիկ անվտանգության «GYUMRI-001» համակարգը:

Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի փորձարարական կայանում կազմակերպվել է խաղողի տնկիների արագացված արտադրություն, որը 1հա հիդրոպոնիկական սնուցվող մակերեսից տվել է խաղողի բարձրորակ 242 հազ. արմատակալ:

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում մշակվել է ալգորիթմ, և ստեղծվել է ծրագրային համակարգ՝ մատնահետքերի վերաբերյալ երրորդ մակարդակի խնդիրներ լուծելու համար, մասնավորապես՝ մատնահետքերից արտածվում են այնտեղ պատկերված ծակոտիները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ևս, ինչպես վերջին մի քանի տարիներին, միջազգային գիտատեխնիկական համագործակցությունը համարվել է ՀՀ ԳԱԱ նախագահության գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը: Միջազգային կապերը հնարավորություն են տալիս համակարգի գիտնականներին գիտական իրենց ձեռքբերումները ներկայացնել միջազգային գիտական հանրությանը, օգտվել ժամանակակից գիտական խոշոր կենտրոնների բացառիկ ինֆրակառուցվածքից և, վերջապես, մասնակցել միջազգային գիտատեխնիկական ծրագրերին, որոնք ֆինանսական հավելյալ աղբյուր են: Այդ համագործակցության շնորհիվ է, որ մեր համակարգի կառույցներում վերջին տարիներին կատարված գիտական մշակումներն ունեն բավականաչափ բարձր մակարդակ տարածաշրջանի գիտական այլ կենտրոնների համեմատ:

Հաշվետու տարում ԳԱԱ-ի բնական և ճշգրիտ գիտական ուղղվածության ինստիտուտները կատարել են հետազոտական աշխատանքներ 81 տարբեր ծրագրերով և դրամաշնորհներով: Ցավոք, աշխատանքների այդ շարքում գրեթե չկան աշխատանքներ հայագիտության և հումանիտար գիտական ուղղություններով: Կատարված աշխատանքների ֆինանսավորումը 2012 թ. կազմել է 600 միլիոն դրամ: Նշված ծրագրերով ձեռք են բերվել նաև որոշ գիտական սարքավորումներ:

Շարունակվել է ԳԱԱ-ի մասնակցությունը Եվրոպայի հարևանության քաղաքականության գործողության,

Յոթերորդ շրջանակային (7Ծ), ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության գործողությունների, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) և այլ միջպետական ու առանձին երկրների կողմից հայտարարված միջազգային ծրագրերին:

ԳԱԱ-ի համակարգում շարունակում է գործել Եվրոպական միության հետազոտությունների և զարգացման 7-րդ շրջանակային ծրագրի կոնտակտային անձանց ցանցը, որի աշխատանքները համակարգում է ԳԱԱ փոխնախագահ Յու. Շուքուրյանը: Խմբի կողմից օժանդակություն է ցուցաբերվել ինչպես ակադեմիական համակարգի, այնպես էլ ՀՀ գերատեսչական այլ կազմակերպությունների գիտնականներին:

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԱԱ միջազգային համագործակցության մաս են կազմում ԳԱԱ արտասահմանյան անդամների հետ տարվող աշխատանքները: Համագործակցության նրանց առաջարկները, ԳԱԱ համակարգի և ՀՀ գիտակրթական այլ կազմակերպությունների հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածություններն ընդգրկում են մի շարք կարևոր ուղղություններ՝ համատեղ հետազոտությունների իրականացում և հետազոտական նոր ծրագրերի մշակում, մասնագետների պատրաստում և վերապատրաստում, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, համատեղ աշխատությունների պատրաստում, մասնակցություն Հայաստանում կազմակերպվող գիտակրթական և գիտակազմակերպական միջոցառումներին, համատեղ միջազգային գիտաժողովների կազմակերպում:

ԳԱԱ նախագահը և ՌԴ «Միավորված ավիաշինական կորպորացիա»-յի նախագահ, ԳԱԱ արտասահմանյան անդամ Մ.Պողոսյանը ստորագրել են գիտատեխնիկական և ինովացիոն համագործակցության համաձայնագիր՝ ՌԴ և ՀՀ ավիաշինական համալիրի պահպանման, մրցունակության բարձրացման, ավիացիոն տեխնիկայի ստեղծման հեռանկարային ծրագրերի իրականացման համար:

ԳԱԱ արտասահմանյան անդամ Գ. Գաբրիելյանի նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ ստեղծվել է ԼՂՀ պետական երկրաբանական ծառայությունը, ԼՂՀ Քաշաթաղի շրջանում երկրաբանական գիտությունների ինստիտուտի մասնագետներն իրականացրել են հանքայնացումը վերահսկող կարևորագույն երկրաբանական կառուցվածքների բացահայտման, հետազոտման և զննահատման աշխատանքներ, բացահայտվել են հանքայնացման հեռանկարային ստույգ տեղամասերը:

ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտը և Բելառուսի ԳԱ նոր նյութերի քիմիայի ինստիտուտը (տնօրեն՝ ԳԱԱ արտասահմանյան անդամ Վ.Աղաբեկով) «Բիոքսիլ-1» ախտահանիչ միջոցի փորձնական արտադրության մշակում և կազմակերպում» նախագծի շրջանակներում համատեղ հետազոտել են մի շարք մետաղների ու համաձուլվածքների կոռոզիոն կայունությունը պինդ պերոքսոտվատների լուծույթներում:

ՌԲԳԱ սննդի ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ արտասահմանյան անդամ, ակադեմիկոս Վ. Թուտելյանն իր ղեկավարած ինստիտուտի հնարավորություններն օգտագործելով, մեծ աջակցություն է ցուցաբերում ՀՀ-ում սննդամյութեր արտադրող և դրանց պատրաստման տեխնոլոգիաները մշակող կազմակերպություններին:

ԳԱԱ արտասահմանյան անդամ Յու. Հարությունյանը (ՌԴ) 2011 թ. հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության իմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի հետազոտական խմբի գիտական խորհրդատուն է: Նրա անմիջական մասնակցությամբ խումբը հայերի համեմատական հետազոտություններ է իրականացնում ՀՀ-ում, ՌԴ-ում, Իրանում և Լուս Անջելեսում:

ԳԱԱ արտասահմանյան անդամները հնարավորինս աջակցել են երիտասարդ մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացին, նրանց ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական ատենախոսություններ:

Արտասահմանյան անդամ Գ.Մարգարյանի (Մեծ Բրիտանիա) նախաձեռնությամբ անգլիական «Rinicom LTD» կազմակերպությունը սահմանել է երկամյա դրամական մրցանակ «Տեղեկատվական տեխնոլոգիաների» բնագավառում ԳԱԱ լավագույն երիտասարդ գիտնականի համար:

Արտասահմանյան անդամների հրավերով ԳԱԱ ինստիտուտների երիտասարդ աշխատակիցներն այցելել

են նրանց կազմակերպություններ՝ համատեղ գիտական հետազոտություններ կատարելու նպատակով: Այդ հետազոտությունների արդյունքն են միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում տպագրված 25 հոդվածները:

Անդրադառնալով գիտական կարգերի խնդրին, ԳԱԱ նախագահը ընդգծեց համակարգը միջին տարիքի գիտնականներով համալրելու կարևորությունը, քանի որ այս խմբով են պայմանավորված և՛ բարձրորակ գիտական նվաճումների ձեռքբերման, և՛ երիտասարդ կարգերին հմտություններ ուսանելու, և՛ հատկապես միջազգային դրամաշնորհային ծրագրեր ղեկավարելու գործընթացները:

Համակարգի բարձր որակավորման գիտական կարգերի պատրաստումը իրականացվում է ըստ ասպիրանտական գործող համակարգի:

Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել՝ արտադրությունից կտրված 27, արտադրությունից չկտրված 21 երիտասարդ:

Տարեկազբին միջազգային գիտակրթական կենտրոնի մագիստրատուրայում սովորել է 1080 մագիստրանտ, որոնցից 52-ը՝ պետպատվերով:

Խոսելով գրադարանների մասին, զեկուցողը որպես կարևոր գործառնություն նշեց հայ հնաստիպ գրքի կայքէջի խմբագրման աշխատանքները: Հիմնարար գրադարանում ավարտվել է վաղ շրջանի (1801-1850 թթ. գրքերի 1331 անուն, 173.153 էջ) թվայնացումն ու տեղադրումը համացանցում: Հատուկ ուշադրություն է դարձվում հայագիտական բացառիկ արժեք ներկայացնող հրատարակությունների թվային շտեմարանների ստեղծմանը և համացանցում հասանելի դարձնելուն:

ԳԻՏԱՐԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Հաշվետու տարում պետական բյուջեից ընդհանուր աշխատավարձի ֆոնդը կազմել է 3693,6 միլիոն դրամ, որն ամբողջ ֆինանսավորման 73%-ն է: Համակարգի աշխատողների ամսական միջին աշխատավարձը մեկ մարդու հաշվով, առանց արտաբյուջետային միջոցների, կազմել է 76,5 հազար դրամ: Արտաբյուջետային ֆինանսների ծավալը հաշվետու տարում կազմել է տարեկան ֆինանսավորման 32%-ը: Սա լավ ցուցանիշ է անգամ զարգացած առաջատար երկրների համար: Այդ ծավալի հիմնական մաս են կազմում արտասահմանյան դրամաշնորհային ծրագրերը և պայմանագրային աշխատանքները:

ՍՈՑԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2012 թվականին ևս սոցիալական հարցերը, հնարավորության սահմաններում, եղել են ԳԱԱ ուշադրության կենտրոնում: Համակարգի աշխատակիցների միջին աշխատավարձը պետական բյուջեից 76,5 հազար դրամ է: Հավելելով նաև արտաբյուջետային միջոցները՝ ունենում ենք մոտ 100 հազար դրամ աշխատավարձ: Ընդ որում, ոչ բոլոր աշխատակիցներն են օգտվում արտաբյուջետային միջոցներից: Այդ միջոցները հիմնականում գոյանում են դրամաշնորհներից և պայմանագրային աշխատանքներից, որոնց սակավաթիվ աշխատողներ են մասնակցում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ամբողջ համակարգում ամենացածրը հումանիտար ուղղվածության ինստիտուտների աշխատակիցների աշխատավարձն է: Պատճառն այն է, որ այդ ինստիտուտների արտաբյուջետոն է շատ սակավ, և նրանք, որպես կանոն, չունեն միջազգային գիտակրթական ծրագրեր:

Սոցիալական բնույթի բազմակողմանի գործունեություն է ծավալել ակադեմիայի «Գիտության զարգացման» հիմնադրամը: Այս խողովակով համակարգի 13 կազմակերպությունների աշխատակիցները ստացել են 7.5 միլիոն դրամի նյութական օգնություն:

Նախորդ հաշվետու ժողովում բարձրացվեց համակարգի աշխատակիցներին «Սոցիալական փաթեթ» ծրագրում ընդգրկելու հարցը: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը խոստացավ դրական լուծում տալ հարցին: Ներկաներին տեղեկացնեն, որ կառավարությունը կատարել է նախագահի առաջադրանքը, և ակադեմիայի 3200 աշխատակից ընդգրկվել են այդ ծրագրում:

Հարգելի՛ ներկաներ, պարզ է, որ համակարգի բոլոր կառույցների ձեռքբերումներին և բացթողումներին մեկ զեկուցման մեջ անդրադառնալ անհնար է:

Կարծում եմ՝ ակտիվ ու շահեկան գործնական քննարկում կծավալվի, և Ձեր ելույթներում կնշեք ու կխոսեք հետայսու մեր առաջնահերթ անելիքների մասին, ինչը կնպաստի մեր գիտելիքահեռք պետության զարգացմանը:

(ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի հաշվետու զեկուցումը ուղեկցվում էր գծապատկերների և լուսապատկերների ցուցադրությամբ: Զեկուցումը տպագրվում է մասնակի կրճատումներով):